ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.09.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/126

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.08.2018թ. թիվ 01.1/26-3/15388-18 գրությամբ «Նարգար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 14.08.2018թ. թիվ 1094 գրության հիման վրա, 28.08.2018թ. թիվ 01.1/26-3/15388-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Նարգար» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Նարգար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Նարգար» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը 28.07.2018թ. մասնակցել է «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար (այսուհետ՝ Պատվիրատու) շինանյութի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 07.08.2018թ. տրվել է եզրակացություն, համաձայն որի «Նարգար» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (27.07.2018թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ (33 601 ՀՀ դրամ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.08.2018թ. ժամը 12:00 տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է. «Քանի որ «Նարգար» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն, ուստի հանձնաժողովը մերժեց «Նարգար» ՍՊԸ-ի հայտը՝ ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 6, կետ 1, 2-րդ ենթակետի»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը...:

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Այսպիսով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «Նարգար» ՍՊԸ-ն 28.07.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օր) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 33 601 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.08.2018թ. տեղի ունեցած հայտերի գնահատման նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Նարգար» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Ընկերությունը նշել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.08.2018թ. տեղի ունեցած հայտերի գնահատման նիստի թիվ 3 արձանագրությունը մինչ օրս ընդհանրապես հրապարակված չէ տեղեկագրում, ինչպես դա պահանջում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասը: Վերոհիշյալ արձանագրությունը պարունակվում է միայն պատվիրատուի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մ.Անանյանին ներկայացված փաթեթում:

Ավելին՝ gnumner.am համացանցային կայքում 03.08.2018թ. հրապարակված է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.08.2018թ. տեղի ունեցած նույն թիվ 3 արձանագրությունը, սակայն այն ունի լրիվ այլ բովանդակություն, իսկ ՍՑ-ԱՄ-2018/126 ընթացակարգի շրջանակներում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրված փաստաթղթերում առկա նույն թիվ 3 արձանագրությունն ունի այլ բովանդակություն, այսինքն www.gnumner.am կայքում հրապարակված արձանագրությունների համաձայն՝ առկա չէ «Նարգար» ՍՊԸ-ի կողմից ժամկետանց

հարկային պարտավորություն ունենալու և համապատասխանաբար՝ հայտը մերժելու վերաբերյալ որևէ արձանագրություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Այսպիսով ստացվում է մի իրավիճակ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջների խախտմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը www.gnumner.am կայքում չհրապարակելով 08.08.2018թ. թիվ 3 արձանագրությունը՝ զրկել է Կարգի 45-րդ կետով սահմանված մասնակցի կամ կոմիտեի կողմից մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու հնարավորությունից:

Հատկանշական է նաև այն փաստը, որ նման մոտեցում է հայտնել նաև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Սարգսյանը իր կողմից 08.08.2018թ. կայացրած թիվ ՍՑ-ԷՍ-2018/107 որոշմամբ: Վերոհիշյալ ՍՑ-ԷՍ-2018/107 որոշմամբ արձանագրվել է, որ տվյալ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը www.gnumner.am կայքում նույնպես

ընդհանրապես չի հրապարակել գնահատման նիստի արձանագրությունը, և Է. Սարգսյանը տվյալ փաստական հանգամանքներում գտել է, որ. «Միաժամանակ, նկատի ունենալով, որ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում մասնակցի տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը, և հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժելու արդյունքում Ընթացակարգը 12-րդ չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած, այսինքն, Հանձնաժողովի կողմից չի տրվել Կարգի 45-րդ կետով սահմանված՝ մասնակցի կամ կոմիտեի կողմից մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու հնարավորություն, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերությունն, ըստ էության, զրկվել է Կարգի 45-րդ կետով նախատեսված լրացուցիչ տեղեկատվությունը Հանձնաժողովին ներկայացնելու հնարավորությունից, որը կարող էր ներկայացվել ինչպես Ընկերության կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող Հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտել է, որ «Ֆայր Պրո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

2. Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձից խնդրել է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ «Նարգար» ՍՊԸ-ն, հանդիսանալով բարեխիղճ ընկերություն և երբևիցե չխախտելով գնման գործընթացում սատնձնած որևէ պարտավորություն, 28.07.2018թ. (ոչ աշխատանքային՝ շաբաթ օր) ներկայացնելով հայտը և պարզելով, որ առկա է 33 601 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություն՝ հենց հաջորդող աշխատանքային օրը, այն է հայտերի բացման վերջնաժամկետի օրը (30.07.2018թ.) մարել է վերոնշված պարտքը:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, ինչպես նաև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ԷՍ-2018/107 ընթացակարգի

վերաբերյալ կայացրած որոշումից՝ Ընկերությունը խնդրել է «Նարգար» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Նարգար» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/126 ընթացակարգի շրջանակներում 30.08.2018թ. ժամը 10:50-ին և 04.09.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 04.09.2018թ. ժամը 10:30-ի նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոնշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. **<u>«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.08.2018թ. թիվ 1094 գրությամբ հայտնել է, որ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ Ընթացակարգ) շրջանակներում «Նարգար» ՍՊԸ-ն թիվ 1-43 չափաբաժինների մասով ներկայացրել է հայտ և որոշ չափաբաժիններով գրավել է առաջին տեղ: Սակայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված հարցման պատասխանից պարզ է դարձել, որ Ընկերությունը հայտը կցելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է գնային առաջարկի 1%-ը: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը՝ «Նարգար» ՍՊԸ-ի հայտը մերժվել է և ծանուցում է ուղարկվել 2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցներին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/126 ընթացակարգի շրջանակներում 30.08.2018թ. ժամը 10:50-ին և 04.09.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ԱՄ-2018/126 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ԱՄ-2018/126 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար շինանյութի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով **<u>29.07.2018թ.</u>** հայտ է ներկայացրել «Նարգար» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ 1-43-րդ չափաբաժինների մասով, որից 1-3-րդ, 5-րդ, 9-12-րդ, 14-16-րդ, 19-րդ, 22-25-րդ, 27-32-րդ, 34-36-րդ, 38-րդ, 40-43-րդ չափաբաժինների մասով առավելագույն գնային առաջարկը կազմել է 819 720 ՀՀ դրամ՝ 36-րդ չափաբաժնի համար:

3. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.08.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Նարգար» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-3-րդ, 5-րդ, 9-12-րդ, 14-16-րդ, 19-րդ, 22-25-րդ, 27-32-րդ, 34-36-րդ, 38-րդ, 40-43-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

5. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 07.08.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Նարգար» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 33 601 ՀՀ դրամի չափով:***

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.08.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.08.2018թ. թիվ 01.1/26-3/15388-18 գրությունը, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 14.08.2018թ. թիվ 1094 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե '

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության. իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի

կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար շինանյութի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով **29.07.2018թ.** հայտ է ներկայացրել «Նարգար» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ 1-43-րդ չափաբաժինների մասով, որից 1-3-րդ, 5-րդ, 9-12-րդ, 14-16-րդ, 19-րդ, 22-25-րդ, 27-32-րդ, 34-36-րդ, 38-րդ, 40-43-րդ չափաբաժինների մասով առավելագույն գնային առաջարկը կազմել է 36-րդ չափաբաժնի մասով՝ ***819 720 ՀՀ դրամ:***

Միևնույն ժամանակ Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.08.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Նարգար» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-3-րդ, 5-րդ, 9-12-րդ, 14-16-րդ, 19-րդ, 22-25-րդ, 27-32-րդ, 34-36-րդ, 38-րդ, 40-43-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 02.08.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Նարգար» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 07.08.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Նարգար» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 29.07.2018թ. դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 33 601 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.08.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 07.08.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Նարգար» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 29.07.2018թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 33 601 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի (առավելագույնը՝ 819 720 ՀՀ դրամ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված մեկ տոկոսի շեմը: Մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/12» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա ***այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված լիազորված մարմին, «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ» 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանման մեջ նշել է, որ եթե Կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և մասնակիցը կամ Կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը պատվիրատուին չի ներկայացրել մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ապա անկախ նշված ժամկետից հետո մասնակցի կողմից լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու հանգամանքից, պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին:

Ընդ որում, այս դեպքում նկատի ունենալով, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող

ժամկետանց պարտավորություններ չունենալու վերաբերյալ, սակայն Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությամբ արձանագրվում է ժամկետանց պարտավորություն-ների առկայությունը, ուստի այդ հանգամանքը դիտարկվում է որպես մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որի արդյունքում դադարեցվում է այդ մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին և մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությանը կից՝ Ընկերությունը ներկայացրել է «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի 30.07.2018թ. թիվ 89 վճարման հանձնարարականը, համաձայն որի «Նարգար» ՍՊԸ-ի կողմից Կենտրոնական գանձապետարանի «900008000490» հաշվեհամարին կատարվել է 36 000 ՀՀ դրամի վճարում՝ որպես հարկային պարտավորության մարում: Նույն հանձնարարագրի համաձայն՝ վճարումն իրականացվել է 30.07.2018թ. ժամը 14:47-ին, իսկ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետը հրավերով սահմանված է եղել 30.07.2018թ. ժամը 12:00-ն, և համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.07.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության, «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/12» ծածկագրով Ընթացակարգի հայտերը բացվել են 30.07.2018թ. ժամը 12:00-ին:

Ընկերությունը ներկայացված դիրքորոշմամբ պնդել է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը www.gnumner.am կայքում չհրապարակելով 08.08.2018թ. թիվ 3 արձանագրությունը՝ զրկել է Ընկերությանը Կարգի 45-րդ կետով սահմանված մասնակցի կամ կոմիտեի կողմից մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու հնարավորությունից:

Այս տեսանկյունից հայտնում եմ, որ նախ՝ սույն ՍՑ-ԱՄ-2018/126 ընթացակարգի շրջանակներում քննության առարկա է հանդիսանում «Նարգար» ՍՊԸ-ի կողմից՝ Ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու կամ չունենալու և դրա հետևանքով Ընկերության կողմից Ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտման

առկայության հարցը: Երկրորդ՝ Կարգի 45-րդ կետը սահմանում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Սույն կետը վերաբերում է ընթացակարգի շրջանակներում մասնակցի ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու փաստով պայմանավորված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը լիազոր մարմնին տրամադրելու կամ չտրամադրելու գործընթացին, այլ ոչ թե կարգավորում է մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու կամ չունենալու հարցը:

Հայտնում եմ, որ սույն ընթացակարգի շրջանակում քննարկվում է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Նարգար» ՍՊԸ-ի կողմից ստանձնած պարտավորության խախտման հարցը և Ընկերության կողմից վկայակոչված՝ www.gnumner.am կայքում Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ արձանագրության հրապարակված չլինելը էական նշանակություն ունեցող հանգամանք չի կարող համարվել սույն գործի քննության համար, քանի որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ փաստացի ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն, որպիսի փաստն ընդունվում է նաև Ընկերության կողմից:

Ընկերության կողմից վկայակոչված՝ Կարգի 45-րդ կետի ենթադրյալ խախտումը նաև չի կարող հանգեցնել Ընկերության իրավունքների խախտման, քանի որ բոլոր դեպքերում Ընկերությունը զրկված չի եղել, այդ թվում նաև սույն ՍՑ-ԱՄ-2018/126 ընթացակարգի շրջանակներում, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին տրամադրված եզրակացությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն

ներկայացնելու հնարավորությունից, որպիսի տեղեկատվությունն, արձանագրում եմ, որ չի ներկայացվել:

Դրա հետ մեկտեղ համաձայն Պատվիրատուի կողմից տրամադրված Armeps համակարգի համապատասխան էջի քաղվածքի՝ 08.08.2018թ. «Նարգար» ՍՊԸ-ին Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ուղարկվել է վերջինիս հայտը մերժելու մասին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.08.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությունը:

Ավելին՝ արձանագրում եմ նաև այն փաստը, որ Կարգի 45-րդ կետի համաձայն Պատվիրատուի կողմից «Նարգար» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով լիազորված մարմնին ուղարկվել են 14.08.2018թ., մինչդեռ Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ որոշումը կայացվել և Armeps համակարգի միջոցով վերջինիս ուղարկվել է 08.08.2018թ.:

Ինչ վերաբերում է «Նարգար» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Սարգսյանի կողմից կայացված ՍՑ-ԷՍ-2018/107 որոշմանը հղում կատարելուն, ապա հայտնում եմ, որ նշված որոշման հիմքում բողոքը քննող անձը դրել է Ընկերության իրազեկված չլինելու հետևանքով հարկային պարտավորության մարմանն ուղղված վճարումը սահմանված ժամկետում սխալմամբ այլ հաշվեհամարի փոխանցած լինելու հանգամանքը, որի պայմաններում ժամկետանց հարկային պարտավորության փաստի արձանագրումը բողոքը քննող անձի կողմից չի դիտարկվել որպես մասնակցի կողմից հարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման արդյունք:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 07.08.2018թ. տրամադրած եզրակացության համաձայն՝ «Նարգար» ՍՊԸ-ն «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/12» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված մեկ տոկոսի շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորութուն, ուստի գտնում եմ, որ Ընկերությունը «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/12» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.08.2018թ. թիվ 01.1/26-3/15388-18 գրությամբ՝ «Նարգար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 07614133) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Նարգար» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**